# Աշխատանքի արտադրողականության բարձրացման խթանիչների պլանավորում և աջակցություն (Work Incentives Planning & Assistance - WIPA)

## Ի՞նչ է WIPA-ն

Աշխատանքի արտադրողականության բարձրացման խթանիչների պլանավորման և աջակցման (Work Incentives Planning & Assistance - WIPA) ծրագիրն անվճար ծառայություն է Սոցիալական ապահովության վարչության շահառուների համար, ովքեր ստանում են նպաստներ հաշմանդամության հիման վրա, որպեսզի կատարեն տեղեկացված ընտրություններ իրենց աշխատանքային նպատակների վերաբերյալ: Այս ծրագիրը ներկայումս զբաղված, ինքնազբաղված կամ այն անձանց համար է, ովքեր փնտրում են աշխատանք կամ ինքնազբաղվածություն:

Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունը Սոցիալական ապահովության վարչության հետ համատեղ տրամադրում է WIPA ծառայություններ Սոցիալական ապահովության վարչության շահառուներին Սան Դիեգոյի Imperial և Riverside օկրուգներում:



## Ո՞վ է համապատասխանում ծրագրին

WIPA ծառայություններն ստանալու համապատասխանության համար դուք պետք է.
- ստանաք նպաստներ Սոցիալական ապահովության վարչությունից հաշմանդամության հիմքով (SSDI կամ SSI), կամ եթե դրամական նպաստները կասեցվել են վերջերս աշխատավարձի պատճառով
- լինեք առնվազն 14 տարեկան,
- լինեք չհամապատասխանող Սոցիալական ապահովության թոշակավորման նպաստների տրամադրման համար
- ունենաք աշխատանք, լինեք ինքնազբաղված կամ փնտրեք աշխատանք:

# Ինչպես կարող է WIPA-ն օգնել ինձ

Աշխատանքի արտադրողականության բարձրացման խթանիչների ծրագրի համայնքային հավաստագրված համակարգողը (Community Work Incentives Coordinator - CWIC) կարող է աշխատել ձեզ հետ՝

- պլանավորելու այն ազդեցությունը, որը աշխատանքը կթողնի ձեր նպաստների վրա
- մշակելու աշխատանքի արտադրողականության բարձրացման խթանիչներ, որպեսզի դուք հաջողության հասնեք
- համակարգելու աշխատանքն այն մարմինների հետ, որոնք օգնում են ձեզ վճարել աշխատանքի վերադառնալու համար ձեզ անհրաժեշտ դասընթացների կամ ծառայությունների դիմաց

Disability Rights California



**Բոլոր ծառայություններն անվճար են**

**Կապվեք WIPA-ին հետևյալ հեռախոսահամարով**
**(888) -768-7058**

Օկրուգային այլ WIPA ծրագրեր կամ Սոցիալական ապահովության վարչության աշխատանքային կարգի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն գտնելու համար զանգահարեք Ticket to Work թեժ գծին (866) 968-7842 հեռախոսահամարով կամ www.choosework ttw.net/findhelp/ միջոցով

*Այս փաստաթղթի համար վճարվել է պետբյուջեի միջոցներից Սոցիալական ապահովության վարչության համագործակցության վերաբերյալ համաձայնագրի համաձայն: Չնայած Սոցիալական ապահովության վարչությունն ստուգել է այս փաստաթղթի ճշտությունը, այն սակայն չի համարվում Սոցիալական ապահովության վարչության պաշտոնական տեղեկագիր:*

*Կալիֆորնիայի Հաշմանդամների իրավունքների հարցերով զբաղվող 501(c)(3) կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տես  www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html*